

«Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/10

23 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Միտրաս» ՍՊԸ 08.12.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ ՍԿԴՎ 13.11.2014 թ-ի թիվ 5010786 ակտի դեմ:

«Միտրաս» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Ստուգման ընթացքում ընկերությունը տրամադրել է ստուգվող ժամանանակահատվածին վերաբերվող համապատասխան հաշվառման բոլոր սկզբնական փաստաթղթերը:

Ստուգումն իրականացվել է համաձայն «Ստուգումների մասին» ՀՀ օրենքի: Ստուգման ավարտին հարկային տեսուչների կողմից ներկայացվել է ԱԿՏ թիվ 5010786, որով շահութահարկի և ԱԱՀ-ի գծով արձանագրվել են լրացուցիչ պարտավորություններ: Ընկերությունն արձանագրված պարտավորությունների հետ համաձայն չէ:

«Միտրաս» ՍՊԸ-ն 2012 թ-ից գործունեություն ծավալելիս իրեն չի համարել ԱԱՀ վճարող, քանի որ չի խախտել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ե) ենթակետի դրույթները: Մասնավորապես, «Միտրաս» ՍՊԸ 50 տոկոս բաժնետեր Գուրգեն Մխիթարյանը հանդիսանում է ֆիզիկական անձ և այլ կազմակերպություններում չունի բաժնեմաս կամ փայաբաժին:

Գուրգեն Մխիթարյանը 2012 թ-ից գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր և չի խախտում վերը նշված հոդվածի դրույթները այն պարզ պատճառով, որ ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկերով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օտարելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Հետևաբար, նար որպես կազմակերպություն չի կարող դիտվել, ինչի մասին նշված է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ե) ենթակետի դրույթներում: Ընդ որում, «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, անհատ ձեռնարկատերն իրավունք ունի օրենքով նախատեսված դեպքերում հիմնադրել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակիցը, որով էլ հստակեցվում է, որ անհատ ձեռնարկատերը իրավաբանական անձ չէ:

Վերը շարադրվածից ելնելով, ընկերությունը պնդում է, որ 2012 թ-ին չէր կարող հանդիսանալ ԱԱՀ վճարող, հետևյալ պատճառաբանությամբ:

«ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի նախորդ օրացուցային տարում իրականացված՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված գործարքների հարկվող շրջանառությունը չի գերազանցում 58.35 միլիոն դրամը:

Ընկերության կողմից չի խախտվել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ե) ենթակետի դրույթները, հետևապես հանդիսացել է շրջանառության հարկ վճարող՝ համաձայն «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների:

Ստուգման ակտում նշված է, որ ընկերությունը խախտել է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ մասի դրույթները, սակայն նշված չէ, թե 4-րդ մասի որ կետի պահանջներն են խախտվել:

«Միտրաս» ՍՊԸ բաժնետերեր Գարեգին Մխիթարյանը և Արմեն Շարաֆյանը ֆիզիկական անձինք են, այլ ոչ թե առևտրային կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր և նուտար, նրանք այլ առևտրային կազմակերպություններում փայաբաժիններ չունեն:

Հարկ է նշել նաև, որ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որի արդյունքում օրենքի 3-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ և ուժի մեջ է մտել 2013 թ-ի հունվարի 1-ից: Այդ փոփոխությունների արդյունքում, հաշվի առնելով «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի դրույթները, ԱԱՀ վճարողներ են համարվում օրացուցային տարվա ընթացքում ԱԱՀ-ի շեմը գերազանցելու դեպքում կամ ԱԱՀ վճարող համարվելու հայտարարություն ներկայացնողները:

«Միտրաս» ՍՊԸ 2012-2014 թ.թ. շրջանառությունը կազմել է ընդամենը 5.931.000 դրամ: Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում վճարել է բոլոր պարտավորությունները և գործունեությունն իրականացրել է օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան: Հետևապես, ստուգման ակտով առաջադրված պարտավորություններն անհիմն են:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 29.09.2014 թ-ի թիվ 5010786 հանձնարարագրի համաձայն «Միտրաս» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՍԿԴՎ 13.11.2014 թ-ի թիվ 5010786 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով շահութահարկի և ԱԱՀ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.375.847 դրամ, ինչպես նաև շրջանառության հարկի գծով պակասեցման ենթակա գումար՝ ընդամենը 86.000 դրամ:

Ակտով շահութահարկի և ԱԱՀ-ի գծով լրացուցիչ պարտավորություններ առաջադրելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ «Միտրաս» ՍՊԸ-ն 2012 թ-ի ընթացքում իրեն համարել է ավելացված արժեքի հարկ վճարող չհանդիսացող, իսկ 2013 և 2014 թ.թ.-ին շրջանառության հարկ վճարող: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության բաժնետեր Գարեգին Մխիթարյանը 20.03.2012 թ-ին գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր, հետևապես ղեկավարվելով «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դ) ենթակետի դրույթներով, ընկերությունը 2012 թ-ի 2-րդ եռամսյակից պետք է գործունեությունն իրականացնել հարկման ընդհանուր դաշտում, այսինքն՝ հանդիսանար ԱԱՀ վճարող:

Այսպես, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2012 թ-ին գործող խմբագրության 3-րդ հոդվածի դ) ենթակետի համաձայն. «Անձինք, որոնց կողմից նախորդ օրացուցային տարում իրականացված՝ սույն օրենքի 6 հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերով սահմանված գործարքների (գործառնությունների) հարկվող

շրջանառությունը չի գերազանցել 58,35 միլիոն դրամը, տվյալ օրացուցային տարում ԱԱՀ վճարող են համարվում այդ գործարքների հարկվող շրջանառությունը 58,35 միլիոն դրամը գերազանցելու պահից՝ 58,35 միլիոն դրամը (ԱԱՀ-ի շեմը) գերազանցող մասի համար:

...
Սույն հոդվածով սահմանված ԱԱՀ-ի շեմը չի կիրառվում՝

...
դ) այն կազմակերպության նկատմամբ, որի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալի 20 տոկոսը կամ ավելի մասը (բաժնետոմս, բաժնեմաս, փայաբաժին) պատկանում է այլ առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի, կամ... »:

Իր հերթին, «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա» ենթակետով հստակ սահմանված է, որ. «3. Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝

...
4) առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, եթե՝

ա. առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող ֆիզիկական անձին.»:

Քննարկվող դեպքում «Միտրաս» ՍՊԸ-ի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) 20.03.2012 թ-ից պատկանում է անհատ ձեռնարկատեր Գարեգին Մխիթարյանին: Հետևապես, «Միտրաս» ՍՊԸ-ն 2012 թ-ի 2-րդ եռամսյակից պետք է համարվեր ավելացված արժեքի հարկ վճարող:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդումներին, որ Ակտի 4-րդ կետում նշված է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ե) ենթակետի դրույթները խախտվելու վերաբերյալ, սակայն ընկերության կողմից վերջինիս դրույթները չեն խախտվել, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ ակտում ընդամենը հղում է կատարվել հետաքննիչի տրամադրած նյութերին: Տվյալ դեպքում ընկերության կողմից խախտվել են նշված օրենքի 3-րդ հոդվածի դ) ենթակետի դրույթները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ ՍԿԴՎ 13.11.2014 թ-ի թիվ 5010786 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻԽԻՏՅԱՆ

